


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԻՒԿ

20
ՅԱՆՎԱՐ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻՒԿ

20
ՍԱՆՎԱՐ

ՀԱՆՂԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵԾՏԱԿԱՆ

Կը հրահարակոյի հարաք օրերը : Մա-
նուցման տողը 10 Սանդիմ : Երկու քիւ ա-
ռաջ հրահարակոյած քերքը 40 Սանդիմ :
Զհրահարակոյած գրոյթիւնը եւ յսրոյթը :

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

Պուլկարիոյ հայաշատ քաղաքներու
մէկ քանիններէն կը ստանանք մէկը միւ-
սին յաջորդող նամակներ , որոնց մէջ
ազգային վարժարաններու ուսուցիչնե-
րը կ'ամբաստանուին՝ իբրեւ անհեռատես
և անտեղի պայքարներու համար հոգի
սուող մարդիկ :

Պարտք կը համարինք զգացնել թէ
պատուելիական սնամէջ կռիւներն ու
աղմուկները՝ որքան տաղտկալի , նոյն-
քան և աւելի վրասակար են , վասն զի
յաճախ անոնց հետեւանքը կըլլայ կըր-
թական գործի արդէն իսկ աւաղելի վի-
ճակին անկումը :

Շատ իսկ է , եթէ մեր ուսուցիչ-
ները կատարեալ բարեխղճութեամբ ,
իրենց խնամքին յանձնուած մանուկնե-
րու դաստիարակութեան գործին նու-
իրութեն , աշակերտներու մտաւոր և բա-
րոյական զարգացման համար ամեն կա-
րելի ճիգ ու ջանք ի գործ դնեն և եզ-

տակար հանգիստնան իրենց աշխատու-
թեամբ և օրինակելի ընթացքով :

Տէրտէրի կամ՝ լուսարարի գործե-
րու խառնուելով , չեն կրնար իրենց
վրայ դրուած յոյսերը արդարացնել :

Ինչքան կռիւներ ալ պատահին
գուրաւր , ուսուցիչնե՛ր աշխատելու են որ
վարժարանը նմանի նաւահանգստի մը ,
ուր խաշաղ հանդարտութիւն մը կը
տիրէ , մինչդեռ անդին կատաղի ծովը
մոլեգին կ'ոռնայ :

Եկեղեցիի , բանկալի , թաղականի ,
հոգաբարձուի կռիւները պէտք չէ՝ ար-
ձագանք գտնեն դպրոցի սեմին ներս ,
ուր սերունդ մը կայ պատրաստուելիք :

Կը ցաւինք որ ուսուցիչներէ ոմանք
մեր առած տեղեկութեանց համաձայն ,
փոխանակ փութ ու մութ վէճերը խափա-
նելու , իրենք պատճառ կը դառնան
շարք մը աննպատակ և վրասաբեր քաշ-
քշուք՝ երու :

Կը սպասենք որ աշակերտներու ի-
րական օգուտը մտածելով , վերջ տան
իրենց այդ գրգռիչ ընթացքին :

ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՁ

Երկու թափոր հանդիպեցան իրարու .
 Թաղում մըն է, սե դագաղ մը խեղճ
 տըղու .
 Սևեր հագած մայրը կ'երթայ ետևէն,
 Տըրտում տըխուր՝ աչքերն անդուլ կ'ար-
 տասուեն:

Մանկիկ մըն է միւսն ալ՝ չքնադ նորածին .
 Բեհեշներու մէջ զայն կընքել կը տանին .
 Թռչունի պէս ճըռռողելով կ'ուռէ կաթ
 Իր զըւարթ մօր թեւերուն մէջ խան-
 դակաթ:

Երբ կ'աւարտին թաղման հանդէսն ու
 կընունք,
 Խաչելութեան պատկերին տակ սրբաշուք,
 Երկու մայրերն հանդիպելով՝ ծնրադիր՝
 Իրարու սիրտ կը հասկընան անձկտիր:

Եւ, աղօթքի ազդեցութեամբ հրաշալի
 Զուարթ մայրն ալ՝ յանկարծ կուլայ,
 կ'ալլայլի
 Դագաղին մօտ, զոր գերեզման կը տանին .
 Իսկ լացող մայրն հոն կը ժպտի՝ նորածնին:

ՀԵՆՆՈՂՈՒՔԻՆ

Զ. Տ.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՁԵՌՆԱԾՈՒՆ

Ճշմարիտ քննադատի պարտակա-
 նութիւնը կատարած ըլլալու համար կը-
 սենք թէ, անցեալ կիրակի իրիկուն Պ.
 Փասուլեանեան եթէ մինակ իր երկու
 վարժ գերասանուհիներովը թատելա-
 բեմ ելներ ու վերոյիջեալ տրամին մէկ
 երկու տեսարանը ներկայացներ, մեծ
 հաճոյք և գոհունակութիւն պատճառած
 պիտի ըլլար հանդիսականին. աւաղ որ
 արհեստին անատեղեակ կարգ մը մար-
 դիկներ իրեն ընկեր առած երեսաց բե-

մին վրայ, որոնք իր վարպետ արհես-
 տաւորի անունը կը նսեմացնեն, մէկ
 խօսքով, տաք կերակուրին մէջ պաղ
 ջուր կը լեցնեն ու հանդիսատեսը կը
 դժգոհացնեն: Անպատշաճ բան չէ՞ դե-
 րերին գոյ չընող ու լաւ չի մարդուող
 մարդիկը տեսարան հանելը. անպատ-
 շաճ բան չէ՞ որ վարագուրին գոցուե-
 լէն վերջը գերասանք ներսը բարձրա-
 ձայն խօսակցին կռիւ. ընելու պէս. ան-
 տանելի չէ՞ զաւթարներու պատրոյգնե-
 րու հօտը, որոնց մէջ քարիւղը խնա-
 յողութեան համար շատ քիչ լեցուած է,
 ու այս ամենուն գլուխ գոծոցը չի՞ հա-
 մարուիր նուագարանի բացակայութիւ-
 նը, որ թաղորոնին ԱՂն է:

Փափաքելի է որ ուրիշ անգամներ
 այսպիսի դիտողութեանց տեղի չի տրուիր,
 թէ Պ. գերակատարք կաշխատին իրենց
 յանձնուած գերերը լաւ կատարելու:

ՄԷՆԲԷՆ

Այս գիշեր քաղաքապետական պար-
 տէզի «Սայիտինէի» սրահին մէջ պիտի
 ներկայացուի «Զոհի փոխարէն Զոհը»
 անուն երեք արարուած կատակախառն
 տրամբ և «Երկու Շատախօսները» անուն
 երկու արարուած խիստ ծիծաղաշարժ
 կատակերգութիւն մը:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Առ Պ. Տ. Ս. Սիլիսդրէ. — Դառն-
 Բօսթերնիդ ստացանք, բայց մայիս 2
 թուակիր նամակնիդ՝ ոչ. իրաւ է որ
 անցեալները նամակատան ցրուիչը Սի-
 լիսդրէէն զրկուած անվճար նամակ մը
 ուզեց մեզի յանձնել, բայց մենք 30
 սանդիմի թաքսա չի տուեալու համար
 մերժեցինք: Առաջին օրէն, անվճար
 կամ պակաս թուր փակցուած նամակնե-
 րը չենք ընդունիր:

ՏԱՆԻՄԱՐԻՄԱՑԻՆԵՐՈՒ ԱՌԱՄՆԵՐ

— Գործի մէջ «գեռ ժամանակ կայ» ըսելով թուլ վարուողը՝ միշտ կը տուժէ:

— Ծառային հաւատարիմ ըլլալը ուղղը՝ ինքն ալ լաւ վարձաւարող տէր մը ըլլալու է:

— Վարպետ եղող մարդը ինքնագով չըլլար:

— Հին հաշիւը կռիւի դուռ կը բանայ:

— Մեծ խոհանոցը քսակը կը պըղտիկցունէ, իսկ պղտիկ խոհանոցը տունը կը մեծցունէ:

— Հարսնիք ընելն է գիւրին, բայց տուն մը ապրեցնելը դժուարին:

— Եթէ հիւրդ հաւ մըն է, քարիիդ շտեմարանին խերն անիծուած է:

— Յածէն թռչողը՝ բարձրը կը թառի:

— Զիկայ մէկը որ ծնելէն, ապրելէն ու մեռնելէն գոհ եղած ըլլայ:

— Գործը շատցունելը գործ չգիտնալէ առաջ կուգայ:

— Վախնալը՝ խենդութիւն է:

— Մարդ ամեն ըսածը գիտնալու, բայց ամեն գիտցածը ըսելու չէ:

— Ծանր քալողը միշտ իր նպատակին կը հասնի:

— Առաքինի չեղող գեղեցիկ կինը՝ գինիի գոյնով քացախի կը նմանի:

— Արեւ եղած տեղը լուսինը գործ չունի:

— Հաւկիթը սիրողը՝ հաւերուն աղմուկին գլուխ պիտի ծռէ:

— Ծառային համբերութիւն, տիրոջն ալ լրջութիւն պէտք է:

— Հովը ամեն ատեն մնրուղած կողմէն չի փչեր:

— Պարտքը վճարելու կամք ունեցողը՝ ձգած աւանդին մեծարժէք ըլլալուն կարելորութիւն չի տար:

— Տասը փարան չի պահողը՝ քսան փարաի տէր չի կրնար ըլլալ:



ՕԳՏԱԿԱՐ ԽՐԱՏՆԵՐ

Եթէ կ'ուզէք ամառը պաղ ջուր ունենալ, ջուրին չիշը թրջած ֆանէլայի կտորով մը շրջապատեցէք ու շուք տեղ մը դրէք:

”””

Քացախը երկար ժամանակ պայծառ և առանց աւրուելու պահելու համար պէտք է դայն առաջուրնէ քիչ մը կրակի վրայ եփ հանել:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ

(Մտանս Բոժոժիկ և Ընկ.)

Լոնտոն

Պ. Մ. Չերազ Դաշնակցականաց համակարծիք չըլլալը յայտարարեց. ասոր վրայ ֆասուլեան գինը 5 փարա ինկաւ:

Տիկին Մարիամ ֆիլիզ եափրաղիով եալանձի տօլմասի մը գնելու վրայ է:

Աղեքսանդրիա

Պիւռօյականաց տեղոյս ներքին գործոց նախարարը իրեն խորհրդական ընտրեց Շիշ-թովի նիշանաւոր պաշտօնեան: Այս ընարու-թիւնը ոտնամարձ քուէարկութեամբ ըն-դունուեցաւ Աշիվատէզի ժողովէն:

Մարսէյլ

Օժանդակ գանձանակին տակը ինկաւ:

Վառնա

Անհամբեր կը սպասուի Վարդ Պատրիկովի յիշատակտրանին շարունակութեանը, զի բազումք ծարաւի են և պապակին ի տապոյ անտի:

Բոժոժիկեան հրամանաւ,

Պրոպականտիսթի աստիճան՝ բեռնակիր Աւօ կիկօին:

Կանաչ և մոխրագոյն տէռօռապետութեան աստիճան՝ կոշիկ ներկող Զինոփին:

Տիպլօսթիքի աստիճան՝ գինեպան Միխալաքիին:

ԳՕԳԱՐՃԱԻ ԲԱՆԱՅԻՐԸ

Քառասուն վայրկեանէ աւելի կը տեւէ վառնաէն մինչեւ Գօքարձա . երկուշաբթի օրը մենք ալ ուղեցինք երթալ ու տեսնել այդ հետաքրքրական ըստնայիւրը, որ անցեալ տարուէն այնչափ գոված էին մէկ քսնի բարեկամներ:

Յորեկուան ժամը Յիւ յայտնեցինք մէջ բացուած գեղեցիկ և ակնապարար ճամբան ձեռք կ'առնենք . կապեր ու հետիւտն ուղեորներ կ'երթան եկին անընդհատ, ամեն մարդ կ'աճապարէր վայրկեան մը առաջ հասնելու այն սրուն վայրը:

Վերջապէս հասանք: Այդինքն ու մէջտեղը ջուրի պատիկ ալ մը կայ, որուն վրայ շինած են տաղաւար մը, գրոշակներով գարդարուած . երկու քահանաներ, հոն կեցած, հաւատացեալ ժողովուրդին նուէրը կ'ընդունէին « յիշեալ լիջիք » ըսելով: Ուստի տարբեր աղօթքներն ընելէ ետքը՝ կիջնեն վարը գլուխը տալով աղբիւրէն խմելու և դէմքերնին լուսւթով:

Այսպէս չորս կողմը բարձրացած են կարգ մը տաղաւարներ, սրճարաններ, որոնց մէջ նուազածու խումբեր զանազան եղանակներ կը նուագեն:

Անհամար բազմութիւն մը ամեն աղբէ և ամեն սեռէ . ամեն դասակարգ իր ներկայացուցիչն ունի հոն . 'ի մէջ այլոց կինը տունը ձգող և ինքը ուրիշներու ետեւէ պտրտող ամուսիններ, Բարիկէն էնսթրիւսթրիսի հովեր ամենող օրիորդներ, ամենապետի տիբլօմ ունեցող սրբալիսթ բրօֆէօսէօրներ, յիշեցուք և զհեծելանիււղոր միւսիւններ, որոնք կայծակի արագութեամբ քովէդ կը սահին և զքեզ յանկարծակիի կը բերեն, վերջապէս Պուլկար գեղջիւհներ իրենց աւանգական խայտաճամուկ շրջագոստներովը ու գլուխնին զարդարած վարդերու և այլազան ծաղիկներու փունջերով: Հոս խումբ մը գիւղացիներ բոլորակ մը ձեւացնելով կը պարեն իրենց ազգային պարը, մէջտեղը կեցող հաս-

տափօր մարդ մը իր փորին պէս ձեռքի տակ կը ունեցուցած՝ գիւղային զանազան կողմեր կը նուագէ, հոն քաղքենի բարեկեցիկ ընտանիքներ տաղաւարներու տակ նստած կ'ունենան իրենց յիշուեցած նուագածուներու . . . ախարժալուր երգերը: Ասդին գաւառացի հայեր, իրենց երկրի շուրջը հաշած, արախ՝ չինին ծուռ՝ արցունքոտ աչքերով՝ մտիկ կ'ընեն թուրք քոշաներու Տալիւլ-զուրման, որ իրենց սրտերու մէջ այնչափ սիրական յիշատակներ կ'արթնցնէ:

Հողեր խաթուեն ալ իր աղջիկները ու թոռները ժողուած հոն եկած էր օրը օրը նստելու համար . ասոնք առտունը շատ կանուխէն ճամբայ ելած էին, որպէս զի կարենան էն աղւոր էն յարմար տեղը գրաւելու: Այսպէս ինքի անկիւնը բոլորուած այդ ընտանիքը ուրախ զուարթ կը խօսակցէր ու կը զուարճանար, սակայն չեմ գիտեր ինչո՞ւ երբեմն երբեմն սրտի անձկութեամբ կասկածոտ նայուածքներ կը նետէին հոս ու հոն . անպատճառ բարեկամի մը կը սպասէին, բանի որ ժամանակը անցած էր եւ տակաւին չէին ճաշած: Վերջապէս ժամը 4ին այդ բանակամը եկաւ հասաւ, քրտինքը երեսէն կը վալէր ու կը հեար, ամենուն դէմքին վրայ անհուն բերկրութիւն մը նկարուեցաւ:

— Վայ միւսիւ Օննիկ, բարի եկար:

— Միւսիւ Օննիկ . տա բարտըսիւդ հանէ:

— Աֆէրիմ, խօսքդ ասանկ էր . մեզի ինչո՞ւ այսչափ սպասեցուցիր, խըյանէթ:

— Տօլմանիս անխտար էփեցաւ քի՛ բըրինձը տոժկեցաւ:

— Հոգիս . քիչ մը գործ ունէի տէ աւոր համար ուշացայ:

— Սանկ քովս եկուր նստէ . բա աղջիկ տա ըռախին թէփսին շտկէ տէ բեր . բանի մը հատ ալ չի ոզ սալաթասի շինէ:

Հինգ վայրկեանէն թէփսին մէջտեղը դրուեցաւ:

— Իրաւոր միւսիւ Օննիկ, սիրտերնիս բէք պիտի կտորեր եթէ չի գալու ըլլայիր:

մեզի կէօղիւնտէքի ըրիր :

— Քա աշխիկ, խենդեցա՞ր ի՞նչ եղար. ադ ի՞նչ բաներ կըսես կոր. հիմա լսողը ի՞նչ չըսեր :

— Էյ ի՞նչ ընեմ, ինչ կուզեն նէ ան ըսեն. միւսիւ Օննիկը եապանճինիս է տէ պիտի բամբասե՞ն :

Հողեր խաթունը— Էյ կենդանութիւն, Աստուած ամեն ատեն ասանկ ուրախ պահէ. (խմելէն ետքը) քա աս ի՞նչ կծու պան է եղեր. պուտ մը ջուր տըւէք :

— Քա Էղսիք, դուն խուռնաղ աղջիկ մըն ես. ըսէ նայիմ, աս տեղը Աթամպօլին ո՞ր գեղը կըլմանի :

— Աման, ես ի՞նչ գիտնամ, ալլահալէմ ֆիլօրիան :

— Չեղաւ, դուն ըսէ քա Մաղթիկ :

— Ինծի անանկ կուգայ քի սանկ կտոր մը Վէլի Էֆէնտին կը չալէ :

— Չեղաւ, աս ալ չի գիտնալո՞ւ բան է. հիմա ըսեմ նէ շաշմիշ պիտի Ըլլաք. թըպլը Պէյլսօղին կըլմանի :

— Մըսի վրա՞ր. Պէյլսօղին ուր տեղը կըլմանի :

— Հիւնքեար խկէլէսիին, սա ո՞ւր է առաջ հայերը ան տեղը սանամար տուտուին տարեդարձը ընելու կուգային. ան ի՞նչ պաներ էր. քա մենք ըսես նէ՞ պզտիկ պզտիկ չօճուխներ, մօրերնէս կաղտուկ կը փախչէինք բանայիլ կերթայինք. դաժալլը հարերնիս, ասօրուան պէս, էտենուս առջևնոս կը պըտտէր. տէյ կիտի կիւնլէր տէյ :

Յանկարծ իրարանցում մը ելաւ մէջերնին :

— Քա աղջիկներ, շտկուեցէք, Մէն աղան կանցնի կոր. պէլքի ալ մեզ կը փնտտէ. գուզում միւսիւ Օննիկ, պաղ պան մը չընես :

— Ան չէ ամա ադ Մէն աղան ո՞վ է :

— Վոյ բէք անլըման մարդ է. հայերէն չիտէ ամա՛ բէք անուշ լեզու մը ունի :

— Հայտէ միւսիւ Օննիկ, հատ մըն ալ խմէ տէ վերցնենք :

— Ինչո՞ւ վերցնենք. թոյ տըր տիւյիւն տիր, պու տա պէօյլէ պիր կիւն տիր :

Բայց Մէն աղան դժբախտաբար չի կըրցաւ բովերնին գալու, նկատելով որ բաղմաթիւ հետաքրքիր աչքեր զինքը կը դիտէին, որով խեղճերը տրտմեցան ու իրիկունն ուշատեն վերադարձան իրենց տունը, օրուան զուարճութեան այս սիրտ կոսրումի տպաւորութեան տակ :

Չի մոռնանք ըսել թէ, այն դիշերունը նէ ՚ի վեր Հողեր խաթունը հիւանդ անկողինէն դուրս ելած չէ եղեր. որովհետեւ բեռամբարձ կառքի մը մէջ դրուած տուն բերուելուն, ըստ իւր յայտարարութեան, կառքին չափազանց երերալէն « սրտին տէօշէմէ թախտասիները խուռտուխաշ » են եղեր : X

ՔՍԱԿԱՀԱՏ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՄԸ

Անցեալները հարուստ մարդ մը Բարիշու Սէն-Ժաք փողոցի ատամնաբոյժերէն մէկուն դիմելով, կըսէ.

— Պա՛րոն, երեք օր է ակուս կը ցաւի, սաստիկ կը տանջուիմ, ուստի կը խնդրեմ, դեղ մը դնէք վրան, որ ցաւը դադրեցնէ :

Ատամնաբոյժը անմիջապէս թելերը սոթտելով, մարդուն ցաւած ակուսին լաւ մը զըննելէն ետքը կը պատասխանէ.

— Պա՛րոն, այս ակուսն փատած է, ուստի զայն պէտք է հանել, բայց որպէս զի ցաւուն կարենաք դիմանալ, զձեզ զլօրօ-ժօռմով պիտի թմբեցնեմ :

Յաճախորդը զգացած ցաւէն ազատելու համար այս գործողութեան կը հաւանի :

Ատամնաբոյժը կ'սկսի գործողութեան, եւ մարդուն ակուսն քաշելէն ետքը, ամենայն ճարտարութեամբ ձեռքը անոր գրպանը խոթելով, հինգ հատ 100 ֆրանքնոց պանգնօթ պարունակող թղթապանակը կը գողնայ, ապա, հանած ակուսին տեղին ցաւը թմբեցնելու համար վրան դեղ մը կը դնէ եւ զարթուցիչ դեղով մը մարդը կարթնցնէ, ը-

սելով թէ, «Ալ ազատեցաք, ուրիշ դեղ գործածելու պէտք չի մնաց»:

Յաճախորդը ըստ սովորութեան ատամնաբոյժին վարձքը տալու համար ձեռքը գրպանը տանելով երբ կը տեսնէ թէ թղթապանակը չի կայ, ափի բերան կը մնայ, կը շուարի և առանց բան մը ըսել կարենալու, խանութէն դուրս կելնէ, ամօթահար:

Քանի մը օրէն ետքը նոյն անձին բարեկամներէն մին այս գողութեան դէպքը ըսելով, կը հասկնայ թէ ատամնաբոյժին կողմանէ ի գործ դրուած էր, ուստի իւր ալ ցաւած ակոյան հանել տալու համար վերոյիշեալ քսակատ-ատամնաբոյժին կը դիմէ:

Մեր վարպետը ըստ իւր բարի սովորութեան, ուրախութենէն ձեռքերը շիւղով, անոր ակոյան եւս ուշադրութեամբ զննելէ ետքը, իւր աւուր պատշաճի նապարակը կը կրկնէ, թէ «Ակոյան շատ փոտած լինելով, պէտք է զայն հանել, բայց որպէս զի պամոնը ցաւուն կարենայ դիմանալ, զօրօժօռնով պիտի թմրեցնէ զինքը»:

Յաճախորդը ատամնաբոյժին այս առաջարկին չի հակառակիր, բայց անոր գործողութիւնը սկսելու վայրկեանին, գրպանէն քսակը հանելով, պարունակութիւնը կ'սկսի համրել:

Ատամնաբոյժը կարծելով որ յաճախորդը իւր վարձքը կանխիկ վճարել կը պատրաստուի. «Ի՞նչ կընէք, պարոն, կըսէ շունորհալի ձեռով մը, հաշիւը վերջէն ալ կըրնանք տեսնել. . . Ի՞նչ հարկ կայ աճապարելու. . . »:

Առ այս յաճախորդը անտարբերութեամբ կը պատասխանէ. — Ներեցէ՛ք, տէր ատամնաբոյժ, ստակը կանխիկ տալու համար չէ որ կը համրեմ, այլ զիս թմրեցնելէ՛դ առաջ քսակիս մէջ ո՞րչափ ստակ գտնուիլը հասկընալ կ'ուզեմ:

Կըսեն թէ՛ այս յայտարարութեան վերայ՝ այն օրէն ՚ի վեր, տօթթօթին ձեռքը բոշուեր է և մինչեւ յաճախորդաց գրպանները չի կրնար եղեր երկնալ:



ԱՆԽՈՂՅԵՄ ԱԶԻ ՄԸ

Ամերիկայի յրագրապետներէ մին, որ մը իւր թերթին ճակատը մեծ տառերով հետեւալ ազգը կը հրատարակէ.

«Թերթիս բաժանորդ ըլլալ փափաքողք փոխարէնը անպատճառ դրամ վճարելու պարտաւորեալ չեն. այլ իրենց պատրաստած կամ ծախելիք ապրանքներէն մաս մը (բաժանորդագնոյն արժէքին հաւասար) խրկող արհեստաւորք կամ խանութպանք ալ բաժանորդ կընդունուին, ամենայն սիրով»:

Այս ազդարարութեան յաջորդ օրը նոյն խմբագրատունը փառաւոր դաճաղ մը կը տարուի կը ձգուի, եւ մեր խմբագիրը անոր մէջէն հետեւեալ տոմար կը գտնէ.

«Ազգերնիդ կարգացի, շատ ուրախացայ. արհեստս դաճաղ շինող է.»

Քանի մը վայրկեանէ ետքն ալ բրիչ մը և թի մը կը բերուի, որոց միոյն կոթին վերայ փակցուած թուղթը սա խօսքերը կը պարունակէր.

«Պատիւ ունիմ իմացնել ձեզ թէ, արհեստով գերեզմանափոր եմ եւ միշտ ձեզ ծառայելու պատրաստ.»

Ասոր վրայ մեր Պ. խմբագիրը խելքը տուն կը կանչէ և գրաշարապետին քովը կը վազէ, գոչելով.

— Շո՛ւտ, շո՛ւտ, այդ թշուառական ազգը վերցուցէ՛ք. հիմա ուր որ են քահանաներն ալ կուգան:

Անցեալ օր գաղթականի մը պըղ-
տիկ աղան իր հօրը հետ ճամբան գա-
ցած ատենը տեսնելով որ ննջեցեալ մը
կը տանին, կը հարցնէ.

— Հայրիկ, մեռելները ո՞ւր կը տա-
նին.

— Գերեզման:

— Գերեզմանը ի՞նչ է.

— Գերեզմանը անանկ տեղ մըն է
որ ոչ ուտելիք, ոչ խմելիք, ոչ հագնե-
լիք, վերջապէս բան մը չի գտնուիր:

— Բայց է որ մեր տունը պիտի բե-
րեն:

— Ինչո՞ւ:

— Վասն զի այդ ըսածներէդ մէ-
կըն ալ մեր տունը չի գտնուիր:

Գիւղացի կին մը իւր տաներէցին
ներկայանալով, ամուսնոյն չափէ դուրս
գինեմոլութեանը համար կը դժգոհի և
կը խնդրէ որ զայն կանչելով պէտք ե-
ղած յորդորները տայ:

Երէցը գիւղացին կանչելով կըսէ.—
Տղաս, պէտք է համոզուիս թէ այդ ա-
նիծեալ ըմպելին քու եւ ընտանեացդ
ամենաառիւծիւթ թշնամին է, արհամար-
հէ՛ զայն:

— Սակայն տէր հայր, միթէ դուք
ամեն օր չէ՞ք քարոզեր ժողովուրդին
թէ « Սիրեցէք զթշնամին ձեր բարի
արարէք ատելաց ձերոց »:

— Հասկցանք ամա, մենք՝ ձեր
թշնամիները « կըլեցէք » չենք ըսեր
կոր:

Պիւր հասթախանէնին պիրինճի տօգ-
թօռու պիր սապահ հասթախանէ մէ-
մուրունա սիւալ իտէր:

— Դա՛չ վէֆիյաթ վար պու կիւն.

— Տօգուղ.

— Նասըլ... պէն զանն իտէր ի-
տիւմ քի օն օլաճագ.

— Հագկընըզ վար միւսիւ տօգթօր,
անճագ, հասթալարտան պիրի՛ վէրտի-
ղինիզ իլաճը ալմատը:

Քօքօշ պիրէ, նէ՛չին պէնտէն գա-
չընըպ տուրուեօրսըն, սէնի չօգ սէվ-
մէքտէ օլտուղումու պիլիրսին.

— Սէվտիղինի պիլտիղիւմ իչիւն
տէյի՛ մի քի սէնտէն ուզագ գաչընը-
եօրըմ:

— Պու նէ՛ պօշ լաֆ տըր.

— Պօշ լաֆ տէյիլ, գըզ, ճէպիմին
պօշլուղունտան տըր քի սէնին սէվտան-
տան գօրգուեօրըմ:

Պէլէտիյէ պաղչէսինին գաբուսու
էօնիւնտէ տուրան պիր քիրազճը իլէ
պիր միւշթէրի:

— Քաչա՞ վէրտին.

— Տալլարա պաստը, պապամ.

— Օգկասը քաչա՞.

— Ալլահ վէրմիշ գուլլար եէսին.

— Քաչա՞ վէրիյօրսըն,

— Իշթէ մալ իշթէ չարչը. չիմտի
կէթիրտիւմ պաղտան. (միւշթէրի ալըպ
եիւրիճմէքտէ տիր) նէ՛րէյէ կիտիյօր
սըն հաճի աղա, պու քիրազա պէյէ՞ն-
մէտինմի.

— Պէյէնտիւմ ամա, տո՛ւր կիտէ-
յիւմ ֆիյաթընը աղայըմտա կէլէյիւմ:

ԵՐԳԱՐԱՆ
ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈՐՐԻԿ ՏՂԱՅՈՑ

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԳԵՍԻ

Ամէն լեզուէ հրատարակութիւնք:

Այցետոմս, հասցէտոմս, նտմաակա
գլուխ, հրաւիրատոմս, բարենիշ. տոմ-
սակ եայլն եայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը աը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին:
Գին գրհացուցիչ: Դիմել Հայելիի խըմ-
բագրութեան:

Վայրկենական Տպագրութիւն
ԱՅՑԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի և ա-
նոր տուփին մէջ կը գտնուի Այցետոմսի գոր-
ծածութեան հրահանգը պարունակոր տէտրակ
մը, որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբա-
գրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանգիմը
յաւանարարողին վրայ է: Դրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 եւ 15 սանգիմնոց նա-
մակագրոջմ կ'ընդունուի: Կանխիկ:



ԳՈՒՀԱԿ
Ա. Պ. Ա. Գ. Ա. Յ. Ի

Կամ Զուարճալի Բաղդադոյց
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզ-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով,
գիմել մեր խմբագրութեան:

ԱԶԴ



ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ԶԲՈՍԱՐԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԻԻՖԷՆԿԱՃԵԱՆ և ԸՆԿ.

Հաճի Բանաբօին ճիշդ գէմը

Արհեստին մէջ կատարելութեան հա-
տած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած
այս հովատուն, մաքուր ու գեղջական հաստա-
տութիւն ոչ միայն պատիւ կը կը բերէ հայ
ճաշակին, այլ և մեծ խման մը կըլլայ որ
հայ ու օտար փափկակերներ իրենց գարնա-
նային ու ամառնային ժամագրավայր մը ը-
նեն զայն զբօսնելու ու ճաշելու:

Հարսանեաց և խնձրներու սպասներ
ալ կը գտնուին, որոնք դիւրսմատչելի գի-
ներով վարձու կը տրուին: 2

«Հայելի»ի Ա. տարւոյ թիւերը
կազմեալ կը վաճառին գին տասը ֆր.
Ա. Զարպհանէլեանի գրատունը:



ԿԱԼՎԱՆԻՍԻ

Ամեն տեսակ
տպագրական կա-

ղապարներ պատրաստող, նաեւ
անձնական և թէ՛ առետրական կնիքներ:
Սոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան
պղինձէ կը շինուին, հրապարակի վրայ երե-
ցած քառչուէ կնիքներէ աւելի դիմացկուն են
և դիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ
քառչուէ գինէն տարբերութիւն չունի: Քա-
ղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով
կը կատարուին: Դիմել ի ջառնա Զիլինկիւ-
լէր փողոց թիւ 561: Գին գրհացուցիչ:



Отговоренъ-редакторъ: Н. Драгулев

Печатница «Взаимность» — Варна.